



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ե Զ Ն Ի Կ Ի Ե Ղ Ծ Ա Ղ Ա Ն Դ Ո Ց Ի

ԲՆԱԳՐԻ ԵՒ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՔՆՆՈՒԹԻՒՆ

(Շարունակութիւն տես Բազմավէպ 1928, էջ 321)

ՀԱՄԱՐԱՆ. 34.	ԲԳՐՏ. 34. - ԳԻՐԳԵԱՆ ՍՐՐ.	ՁԵՆԱԳՐԻ ԱՃ - Գ. ՏԻՐ ՄԻՐՏԶ.
էջ. առդ. 89 7-8 Եւ ոչ լիգելով ողջացու- ցանքն	էջ. առդ. 18	18
ձԱՌ ԻՆ.		
Թէ լատուածքն մարմնամբ	18	
էին թէ Հոգևորք		
91 6-7 կարկեց է կերպարանս	102 8 է կերպարանս կերպարանս	
16 փոխել	21 փոփոխել	
20 նըհանգ	108-6 1 (նըհանգ) որք. նաշանգ	նաշանգ

Ամուրսնս՝ ուղղելի Ստուգանք. փոքր անգրագրութիւն մ'է որ պիտի ընենք մեր յօդուածին նախորդ մասին մէջ կատարած մէկ սրբագրութեան¹ աւելցնելու համար կարևոր փաստ մ'ալ որ մեր ուշադրութեան վրիպեր էր. և ստուգիւ, մինչ զիտեւ տուած էինք թէ Զմ. ապ.ին ասորիքն ձեռ Գէորգ-Բգրա. սրբագրած են ասորեակայք, քայց անդին Աճ. Զ.ը յայտնապէս անէր ստոր-նենայք որուն հնդիսակութիւնը անկասկած կը դառնար խօսքի իմաստին տեսակէտէն ալ, հիմա կը տեսնենք որ Զմ. ապ.ն ալ իր յիշատակարանին վերջերը քանի մը սրբագրութիւններ արել², որոնց մէջ նաեւ այս ասորիքն՝ կ'ուղղէ ստորեակայքն. հետեւաբար կասկածէ դուրս կը մնայ թէ ուղիւ ձեռ է ստորեակայքը վաւերացած Աճ. Զ.էն և Զմ. ապ.էն: Գէորգեան-Բգրա. սրբագրութեան թերին դարձեալ Աճառեանի ոճով կը մեկնուի՝ ըսելով թէ շփոթուած է ասորը ստորի հետ:

1. Բազմավէպ Նոյ-Գեհա. 1928. էջ 330 (Հմա. 92, 8)
 2. Էջ 292 «Եւ աստ ի պարապ տեղաւն եղաց զաւելցնել քառան և հանդէպ նոցուն զուղիքսն». սակայն հազարաւոր սխալներէն միայն 14 համ անգրագրածն են. այլիպէ է հղեր խեղճերուն գիտութիւնը:

էջ. սուր.

21 ի տեղումն
92 2-8 Եւ ի զուր է գաւ՛ կա՛նն սահել
ունենք ի կալսն և ոչ առ աջս:

5 անխօսուն է, զայլ զբառսս

12 և զղլփինաց զորս վիշապս
93 8 մանր ինչ ճճիք

5 արարեալ են վիշապք կամ առ-
նեն

9 երկու և եթ կան Ենօք և Ե-
ղեա

94 16 լուգորդաց
22 միասնաբար մարդակերպ

94 4 ի դաշտս էրէ գեղեցիկ ձգեցին
15 (բառնայցի) ի վեր աշխարհի
վիշապն

16 զի միշտ զի աշխարհայն՝ մարդայ

էջ. տող.

2 ի տեղին

8-9 Եւ ի զուր է կա՛ն կա՛նն ա-
սել ունենք ի կալսն և ոչ առ առ,
(ապ.) - (խոյ սրբ.) Եւ ի զուր
է առ կալսն սահել ունենք ի
կալսն և ոչ առ կալ

11-12 անխօսուն է, զիմար՝ որ
ինքն գրաստ է՝ զայլ գրաստ

22 Եւ զգլփինաց, վիշապս

104 15 մանր մանր ինչ ճճիք

17 արարեալ են վիշապաց կամ
առնեցեն

24 երկու և եթ կան Ենօք և Եղե-
ա

106 11 լուգորդաց
20 մարդակերպ

107 1 ի դաշտս երազազանք ձգեցին
18 ի վեր աշխարհի վիշապն

17 զի մի շողին մարդայ

Աճ. Զ. ք կը լոճ. քսիլ է նոյն է տեղին
էնս որ տարբերութիւն չի նշանա-
կեր:

մանր մանր (երկրորդը լուսանկարում
փոքրատուն)

... ինք են

երկու և եթ կան, Ենօք և Եղեա

զաւգորդաց

ինք

Երկրորդ անգրադարձութիւն մ'ալ Մարիէսի մէկ սրբագրութեան փորձին՝ զոր նոյնպէս յիշած էինք մեր յօդուածին՝ նախորդ մասին մէջ: Ըսած էինք թէ ան «Եւ ոչ ի կովուց ծովացուն» ելեալ՝ կ'ուզէ ուղղել ծովացունս կով գործեաց:

Մական կը խոստովանիկը որ, ինչպէս ինքը ազնուօրէն մեզ թելագրեց, իր գիտումն է 99,7 «Այ ի կովուց ծովացունս ելեալ» ի համեմատ՝ 99, 22-23 ի մէջ ալ «ծովացունս կով գործեաց» կարդալ՝ փոխանակ «ծովացունս գով գործեաց» ի՞նչ:

Այսպիսի ըսիկք սրբագրելու համար Մարիէսի վերագրուած վրիպակ մը զոր նա չէր գործած: Հոս ընթերցողներուն ուշադրութեան կը յանձնենք նկատել կարգ մը տարբերութիւններ Զմ. տպ. և Բագրատ-Գէորգեան-ի (համեմատ ԱՃ. 2-ի) միջև, ինչպէս որ սիւնակներուն մէջ ևս նշանաւորուած է: Զմ. տպ. ին մէջ կը տեսնուի յայտնապէս շանք մը՝ դիւրացնելու և մկնկնելու Եզնկի բառերն և բացատրութիւնները, կ'իմացուի, ոչ առանց ազաւաղելու լեզուն և իմաստը:

Գիտենք որ բարեմիտ ազիտութիւնն է որ թոյլատրած է այդ անորակելի յանդգնութիւնը՝ դարու մը մէջ ուր զեռ միջնադարեան մտայնութիւնը կը տիրէր: Բագրատունին՝ հայ լեզուի խոր ծանօթութեամբն և պաշտամունքով զինուած՝ կատարած է ժամանակին Գէորգեան սրբագրութեան համեմատ մեծ և կարեւոր մագրագործում մը՝ որուն թէպէտ խոժոռ և կասկածոտ աչքով կը նային Գայեմընբար, Բագբէն Ս., Աճառեան, Մարիէս և ուրիշներ, սակայն նոյն ինքն ԱՃ. նորագիւտ Զ. ք կ'արդարացնէ զրեթէ մաքողապէս անոր սրբագրութիւնները: Գէորգեան օրինակը, հաւանօրէն տարբեր ԱՃ-ի Զ. էն, ինչպէս ապացուցանել փորձեցինք հակառակ ոմանց և Մարիէսի՞, անշուշտ օր մը յայտնելով լիովին պիտի արդարացնէ Բագրատունիի գիտութիւնն ալ, ողջմտութիւնն ալ, հաւատարմութիւնն ալ:

Ան օրինակները որ կ'ուզէինք մատնանշել 1. (104,7) առակեցինք՝ առակեցին (91,20), 2. (106,20) Մարդակերպը փոխել և մարդակերպի (94,22) դիրքին ձեռն վերածած: 3. (107,1) Երա-
գազանքը (կամ երազագը) որ կը նշանակէ վայրենի կենդանիներն որսալու թակարդ, ինչպէս յայտնի է ներկայ խօսքին իմաստէն և զանազան հեղինակներու զորածուծութենէ՝, Զմ. տպ. ք փոխած է նրկ գազանքի (95,4) իր գիտած բառերուն վերածելով բառ մը՝ որուն գոյութիւնն և իմաստը կ'անգիտանար: 4. (113 են) յայտ, յայտ առնեմը փոխած է զոճ, զոճ առնեմի (100 են), 5. (115,4) բարամուռը՝ զաւազանի (101,20). երբեմն պարզապէս դրած թարգմանաբար, երբեմն ալ միասին բարեբախտաբար այսպէսքով: 6. (116) մորքեցինք՝ քերթեցին (103), 7. (119,8) լաւգորիւնը՝

1. Բագմավէպ Նոյ-Պեկա. 1928. էջ 381.

2. Տե՛ս Revue ևս էջ, 97 (179) - 98 (180).

3. Տե՛ս իր կարեւորք Revue des études Arm. 1925, էջ 127-3.

4. Տե՛ս Հյգգ. Բարե. «Երազագ».

էջ. տող.

էջ. տող.

ձևեր. ԻՌ.

Յաղագս թէ հրեշտակն պա-
հապանք են մարդկան. և թա-
գաւորութեանց, նաև զլաւու-
թենէ զիւարձ:

- | | | | | | |
|----|-----|------------------------------|-----|-----|---------------------------------|
| 96 | 19 | մտանեն առաջի ողջա՝ կոչին | 108 | 16 | մտանեն առաջի Աստուծոյ՝
կոչին |
| 97 | 2 | (Հարկաւոր են) առաջաւոր | 19 | | առաջիւցորդ |
| 6 | Այլ | թէ զստանայէ ասեն | 24 | Այլ | թէ ստանայ է, ասեն, |
| | | զրգոյն չարաց և այլ արա- | | | զրգոյն չարաց, յայլս ա- |
| | | բանոցն, ընդէ՛ր մաղրի զեր- | | | բարածոցն ընդէ՛ր մաղրի զեր- |
| | | կըրպազութիւն Հեթանոսու- | | | կըրպազութիւն Հեթանոսու- |
| | | թեան, և ոչ յինքն միւսին | | | թեան, և ոչ յինքն միւսին |
| | | կորզիցէ: | | | կորզիցէ |
| 15 | Իս | Հասկից և փայտից | 109 | 12 | և Հասկաց և փայտից |
| 18 | մի | ինչ վարկեցեն | 17 | մի | ինչ վերսեցին, |
| 98 | 9 | անշնչոց և անմոնչից... մատու- | 110 | 7 | անշնչոց և անմոնչից... մա- |
| | | ցանեն | | | տուցանեն |

ձևեր. ԻԻ.

Եղծումն յոճաց իմաստասի-
րացն կարծեաց, թէ նիւթ
աշխարհի ոչ էր յանտակից
Աստուծոյ

ԻԻ

- | | | | | | | |
|----|----|----------------------|-----|----|----------------------|--|
| 98 | 16 | Թշնամին ճշմարտութեան | 110 | 10 | Թշնամին ճշմարտութեան | Թշնամին արդարութեան (ԻԻ ճշմար-
տութեան) |
|----|----|----------------------|-----|----|----------------------|--|

անյաղողութիւն (106), 8. դիպացը՝ դիպումաց, 9. (121, 23) ի մարդկանէ հնարողութենէ՝ ի մարդկային հնարողութենէ 10. (129, 12) քաժը՝ քաժին, 11. (131, 20) դեպը՝ դիպում (117, 9), 12. (136, 15) խոստուիլ՝ խոստովանիլ (121, 15), 13. (142, 9) չէ հաստալիս՝ ամենեւին առասպել է (126, 23), 14. (148, 13) հնազանդեացը՝ հնազանդիցոյց (132, 10), 15. (154, 5) առ իւրումը՝ վրան իւրոյ, 16. (154, 22) մահուանը՝ մահը, 17. (156, 18) Սալահաւաթը՝ ստապատուստ (140, 16), 18. (161, 2) յարեւ արկանիցենը՝ յարեւ զրկիցեն (145, 14), 19. (163, 1) մերկանայն՝ մերկացու-
ցան (146, 10), 20. (163, 22) անցնիւր (խորաքանչիւրը՝ անձին իւր (147, 12), 21. (164, 4) պատ-
ստաքը՝ պատձառիլ (147, 20), 22. (169, 26) նոցա լիւր աղուացեալը՝ նոցա չիկն յապտամբեալը (153, 11), 23. (170, 19-20) անտարանելը՝ օրհնել (154, 2-3) ևն ևն ևն՝:

Ասա մարդը և իր գործը, Բագրատունին և իր սրբազրութիւնները. և զեռ ըսել թէ «Il fau-
dra aussi repartir la culpabilité (գրթին մէջ եղած սխալներու) sur la tête des éditeurs de
Smyrne, de Ter Yohannessian et de Bagratouni»:

103, 1. — ՆԱՆՎԻ Թէ ՆԱՆԱՎ. — Զմ. միշտ նկանց կամ նրհանգ կը դնէ, ինչպէս և բզրտ.
ուպ.ը. նոյնպէս ըլլալու է Աճ. 2. ն ալ, վասն զի համեմատութեան մէջ տարբերութիւն չէ նշա-
նակուած, միայն բզրտ. տպ.ի 104, 1ի հանդէպ է որ Աճ. 2.ը նահանգ ունի, որուն համապա-
տասխան Գէորգեան սրբազրութիւնն ալ նահանգ է. իսկ բզրտ. տպ.ի մէջ հոս ալ նահանգ և ոչ
նահանգ տպ.ը՝ հաւանօրէն միաձև դնելու համար է և ոչ թէ վրիպակ. քանի որ նահանգ ձևը,
միշտ գաւառի նշանակութեամբ է և ոչ երբեք նկանգի = պարսկերէն նէիր խոսակ = գետի ձի, չրային
գազան, Հայկազեան Բ.ի օրինակներն ալ իւսեք. Ոսկ. Եղծկէն՝ չրային գազանի նշանակութեամբ՝
միշտ նկանգ են. և ըստ այսմ հաւանօրէն կասկածելի նկատելով Գէորգեան սրբազրութիւնը Եղծը-
կի տպ.ին մէջ չեն անցնուցած գայն:

103, 8-9. — «Եւ ոչ վիշապք գտնեմականս արդեանց կրեն, և ոչ զրաստ գոյ նոցա՝ ի թէ
գարդիւնս ի կալոյց ուրիթ կրիցեն, և ի գոյր է կալ կայն ասել ումնք ի կալս՝ և ոչ ան ան»:
Հետազոտութեան և մթին ընթերցուած մըն է, որ չեմ գիտեր ինչպէս քննութեան և մեկնու-

1. Աս օրինակներուն առաջինները ուղիղ ձևերն են (Գէորգ-Բագր.), իսկ ձևաորոշները Զմ. տպ.

2. ՅՎ. Revue ևս. էջ 77 (154):

էջ. տող.	էջ. տող.	
99 1 մրրոյ մերձ է	110 16 ի մրուր մերձ է	ի մրուր (ի սոգամբոնում)
9 չարեաց զործող. ի նոյն խո-	111 9-4 չարեաց զործոն ի նոյն	
լումք	խարափ	
23 մատիցուց ի պայտար	22 մատիցուց ի պայտար	ի (պ)այտար (պ թուրքիկն թերուած)
ձԱԹ. ԻԸ.	ԳԻՐԳ ԵՐԿՐՈՐԴ	
Յազազս պարսից առասպե-	Եղծ Քէշէն Պարսից	յիք
լեան, թէ նախ քան զամե-		
նայն էր գրուանն. յարմէ		
ճնեալ որդիքն աբարին զաշ-		
խարհաւ,		
100 8-9 Ջրուան ոմն անուն էր. այ-	118 7-8 Ջրուան ոմն անուն էր որ թարգ-	
սինն աբամազդ որ թարգ-	մանի բախտ կամ փառք:	
մանի բախտ կամ փառք.		
10 և 20 են աշտ աբար, այսինքն	9 յաշտ աբար (յիք զո՛ւ կո՛ոք)	
զո՛ւ կոոք		
19 Որժիզդ և արեւն յգացան	18-9 Որժիզդ և Արեւն յգեցան	
100-1-2 են Որժիզդ	118 են Որժիզդ	Որժիզդ
18 մօր իւրեանց	19 մօր իւրեանց	(մօր իւրեանց)
101 20-1 զբարձուանն (այսինքն զա-	115 1 զբարձուանն	
ւազան)		

թեան չէ արժանացած բանասէրներէն. և որքան որ Գէորգեան օրինակը ըստ խմիչ սրբագրած է Զմիւռեաններ, «Եւ ի զուր է զալ՝ կանն ասել ումի՛ն ի կալս և ոչ առ աշտ» սակայն միտթիւնը դեռ կը մնայ: Աճ. Զ.ը ոչ մէկ տարբերութիւն ունի Գէորգ-Քարոս. սրբագրութենէն:

Փորձենք մեկնել և հաւանական իմաստ մը դուրս հանել: Եղիկն նախ (էջ 97) կ'ապացուցանէ թէ հրեշտակ ու դե անմարմին ըլլալով՝ անծնունդ են. հետեւաբար համբարու, պայ, յուշկապաւ, բիկ, ինչացու կամ ծովացուլ անունները չեն կրնար դեւերէ առաջ եկած բան մ'ըլլալ. անոնք անծ չեն, այլ պարզապէս քաշադանք են մոլորեկոց մտաց (97-98). այս կարգի առասպելներէն է նաեւ յարալէզը: Յետոյ գիյց և դիւցազանք վրայ կը խօսի ցուցնելով վերջապէս թէ հրեշտակն. ըէն ու դեւերէն զատ ուրիշ արարած չկայ:

Այս ճշմարտութեան հետեւանք, կ'ըսէ, հրեշտակ և դեւ են որ «կարող են զօգս զնդել և պար- զել» որպէս զի կարենան ըստ այնմ «ազգի ազգի կերպարանս ցուցանել»: Ասոր հակառակ ժո. դովրդական առարկութիւնը մէջ կը բերէ թէ վիշապներն ու ճանազները զանազան կերպարանք կ'առնեն. բայց իսկայն զայն կը ջրէ՛ փաստելով թէ մարմնաւոր էակն իր կերպարանքը չի կրնար փո. փոխել ինչպէս յայտնի է մարդիկ. ևս առաւել վիշապ (օձը): Հոս է ուրեմն որ կը ջրէ հայ ժողովրդ. դպիւտն հին մասպաշտութիւնը թէ «Եւ ոչ վիշապք զտոհմականս արդեանց բերեն» են. Դոյն նիւթին շուրջ դեռ ուրիշ առասպել առարկութիւններ մէջ բերելով (106-7) իբր թէ «ի կալս շորիք և ուղտք երեւիցին» դիւաք կերպարանք են այն և ոչ վիշապաց... կեղծիք դիւաք են և ոչ ճշմարտութիւնք իրաց»:

Արդ նախորդ ըստածներէն և վերջին երկու տեղերէն կ'իմացուի որ աշնան կալելու շրջանին առասպելներու շուրջ է խօսքը: Ճարպիկ, զող գեղջուկներ կայերու ժամանակ, մութին, անպա. հապան ղէգերը կ'աւարեն և մէջտեղ ձայն կը հանեն թէ՛ վիշապները կրեր տարեր նձ. և միա. միտներն ալ կը հաւատան:

Եղիկի իր դրած հիմնուրուն և օպացոյցներուն համեմատ կ'ուզէ ցուցնել թէ կերպարանափոխ վիշապ գոյութիւն չունի. զուտ առասպել է՝ թէ ան կու գայ մեր կալերէն տոհմականներ կրելու. ձեռնաբար, կ'ըսէ, ի զուր է այդ նրեկները մէկը միտախն աղաղակել «վիշապը բռնէ, վիշապը բռնէ» և լրսել «ձեռքէն ան, ձեռքէն ան»:

Վիշապի առասպելը հին է մեր մէջ, սկսեալ Ափսահակէն — Վիշապ, ուսկից և վիշապա. զուռք են, ինչպէս կը յիշէ Խորենացիին: Կարելի է տեսնել և Ոսկեփորիկները ուր վիշապի շուրջ ժողովրդական կամ շինական առասպելներ կը պատմուին: Բաց ի Հին Կտակարանէն, անշուշտ ազգային այդ հոգեբանութիւնն է որ ազդած է վիշապի գաղափարին մեր եկեղեցական մասունս. գրութեան մէջ:

104, 15 և 107, 1. — Սաւրիկն պարագային (104, 15) Զմ. մանր ինչ կ'ըսէ, մինչդեռ Գէորգ -Քարոս. սրբագրութիւնը՝ մանր մանր, համեմատ Աճ. Զ.ի որ կրկին մանր ունի (մէկը լուսանց.

էջ. տող.

ձԱԹ ԻԹ.

Վասն հերոսաճոյն մանեայ.
և թէ՛ մոզն ոչ զնորին հերս.
մուսնն ունէին.

- 108 1-2 Զէր պարտ ամենէիմք՝ նաև
սոնեկ
5 միմանց հակառակ են
7-8 հնազանդեցեւոցն, և խեղդ ընդ
ամին
11 Մանի (զոր ինքեանք քերթե-
ցին)
20 նոցա երկար մասեանց
104 2 Կեղծեաց
9 զի նոցա կերպարանոց են,

էջ. տող.

- 116 1-2 չէր պարտ ամենէին բնաւ ... բնաւ և (էք սողամերուս՝ փոքրա-
ստա)
6-7 միմանց (հակառակ են)
9-10 հնազանդեցեւոցն, և խեղդ
ընդ ամին
13-4 Մանի, զոր ինքեանք մոր.
թեցին
116-7 երկարմտեանց
117 7 կեղծեաց
16 զի նոցա կերպարանոց են

ձԱԹ Ի.

Առասպելարտեանքին պար-
սեց վասն զբուսնայ, և եղ.
ծուսն Եղնակայ, զեղեցեկ
ոճով մանրամասնաբար:

- 105 13 Այլ ստեն վասն փառաց առ. 118 15 Այլ, ստեն, փառաց առեփր
նէր գաշտն զգաշտն

քում): — 107, 1 Երազագանքը՝ Զմ. կը դնէ Երէ գագանք, հաւանօրէն, ինչպէս ըսինք, անգիւ-
տանալով այդ բառը որ սակայն վաւերական, ուղիղ ձև է ինչպէս կը վկայեն՝ Աճ. Զ. և ուրիշ
օրինակներ (Տճւ չիգզ. Բորն.):

Զմ. տպ. կը պարզէ, իր անսահման ազատութեամբ, նաև առաքելացուքը՝ (108, 19) վերա-
ծելով իրեն միակ ծանօթ առաքեալ ձևին (97, 2):

Հոս ալ կրնանք անդրադարձնել Գէորգեան-Բգրտ. տպագրին հեղինակութիւնն և արժէքը՝
վաւերացած Աճ. Զ. տպ. Ի՛նչ պիտի ըսէ Հ. Արիս որ Զմ. տպ. վրայ յեցած՝ Աճ. Զ. ու Բգրտ.
տպ. կ'ուզէր սրբագրել:

108, 26. — «Այլ թէ ստանայ է, ստեն, գրգռիչ չարեաց, յայլս արարածոցն ընդէ՛ր ՄԱԹԷ
գերկրպագութիւն հեթանոսութեան և ոչ յինքն միայն կորցիցէ»:

Մարիէս՝ մադրէ՝ սադրի կ'ուզէ կարդալ որովհետև իմաստն աւելի պայծառ կ'ըլլայ, և
Շմիտի թարգմանութիւնն ակնարկելով կ'ըսէ, թէպէտ begünstigt գերմ. թէ ազօթել և թէ գրգռել,
վառել (fomenter) կը նշանակէ, «mais tel n'est pas le cas pour մադրէն en arménien». ասորը
համար է որ սադրիմը՝ կ'առաջարկէ իբրեւ գրգռել:

Սակայն այդքան ծանր հարկ մը չկայ և ոչ ո՛ր է բնագրի հեղինակութիւնն այդպիսի փո-
փոխութեան, ինչպէս որ Մարիէս ինքը կ'անդրադառնայ յետոյ՝ ըսելով թէ այնքան ալ դիւրին չէ
այդ բառերուն չփոթութիւնը: Ադոնց ալ իր կարգին իրաւամբ կ'ասկածելի՞ս կը գտնէ այդ փո-
փոխութիւնը:

Միւս կողմէն, կը համարինք որ մադրիմի նշանակութիւնը վերլուծելով զժուար չէ հաւանա-
կան կամ գոհացուցիչ իմաստ մը առ իստքին:

Արդ, մադրել կը նշանակէ աղաչել, խնդրել, ընծայել, թելադրել, բարեխօսել, միջնորդել.
ուստի այսպէս կրնանք մեկնել. Սատանան՝ որ շարիք զրգռող է, հեթանոսութեան երկրպագութիւնը
ինչո՞ւ ուրիշ արարածներու համար կը խնդրէ. և կամ Զարազգիւ Սատանան ինչո՞ւ ուրիշ արա-
րածներու կը նուիրէ հեթանոսութեան պաշտամունքը՝ փոխանակ իրեն կորզելու:

109, 17. — ՎԱՐԿԵՍՅԱՆ՝ ուղղելի վերճնՅԱՆ. — Զմ. ունի վարկեացեն, մինչ Գէորգ-Բգրտ.
սրբագրութիւնը՝ վերտեցիկն. Աճ. Զ. կը դնէ վճի տեցիկն. սակայն վերջին տարբերութիւնը չնչին
է և կ'ասկած չի թաք թէ վերտեցիկն է ուղիղ ձևը. վասն զի վերտեմ կը նշանակէ ոչբախանալ:

1. Զմ. կրկին օր. ալ սրբագրուած են. տպ.ի սխալ է անշատ ձևը:

2. Revue ևն էջ 98 (180):

8. Բազմազգ 1926 էջ 110 (Ապրիլ):

էջ. տող.

106 1 յանալոգութենէ ուրու
2 երկրորդի ի դիպագ
10 անմասութեամբ լինին բաշա-
զանքն

107 10 չէ պատճառ

էջ. տող.

119 3 ի չափողութենէ ուրու
5 երկրորդի ի դիպագ
15 անմասութեամբ լին են բաշա. լին են (և տողաժիւրում)
զանքն
120 21 չէ պատճառ (զբաղը պատճառ չէ պատճառ
զիմիքից ի նմանէ դեմ)

խայտայ, որով իմաստն է՝ թող չուրախանան թէ արարածներու երկրպագուները սատանային կամքը չեն ընեն, վասն զի ոստանան ինքն է որ կը սորվցնէ արարածները պաշտել: Ընդհակառակն Զմ. տպ.ին վարկենմը՝ որ կը նշանակէ բան մը պատաստել, զսպել, բոլորովին անյարմար է ներկայ իմաստին, ինչպէս որ ամբողջ բացատրութեան մէջ կարելի է նկատել. «Եւ արդ մի՞ ինչ վերստնացին, որ արարածոցն երկիր պագանն» թէ զսատանայի զկամս ոչ առնիցեն. զի արարաւ ծոց պաշտոն մատուցանելով վարդապետ այլ ոք չէր, բայց միայն սատանայ»:

111, 3-4. — Ի նոյն խարափ անկեալ և աղանդոցն, զոր թշնամին իբրև գորոմն ի մէջ ցորենոյ սերմանեաց»:

Հիշ. Բոն. «խարափ»ը չի դնեն. արդեօք ուշադրութենէ՞ վերկած է, թէ անվաւեր կամ կասկածելի համարուած է Գեորգ-Բգրտ. սրբագրութիւնը՝ չենք կրնաք վճռել:

Աճ. Զ. ալ, սակայն, Բգրտ-Գեորգեան սրբագրութեան համեմատ խարափ ունի, ինչպէս և Առնոն Բառարան՝ տալով անոր գուր, խորխորատ, որոգայր նշանակութիւնները:

Գեորգ-Բգրտ. Աճառեան և հուսկ Առնոն Բառարան, երբեք հեղինակութիւններ, կընան վտանացնել մեզ թէ խարափ ուղիղ ձևն է. բառին նշանակութիւնն ալ, Առնոն համեմատ, առանց դժուարութեան խօսքին իմաստը կը յայտնէ՝ մանաւանդ երբ համեմատենք 111, 34 համարը, նախորդ 110, 19-22ին հետ. ահա վերջինս. «Եւ Պարսից քէշին գտիք առ ի տարակուսելոյ՝ թէ ուստի՞ չարիքն լինիցին, ընդ նոյն արաննտս վրիպեալք ի ճշմարտութենէն...» ուր Եւ Պարսից քէշին գտիք... ընդ նոյն արաննտս վրիպեալքը՝ և ի նոյն խարափ անկեալ և աղանդոցն՝ ծոցն պատկերն և իմաստն ունին, որով խարափն ալ մերձաւորապէս արաննտի նշանակութիւն ունենալու է, ուսկից շատ հեռու չէ կարծեմ Առնոնի տուած օր. որոգայթը. քանի որ արաննտ նեղ, վտանգաւոր ճամբու և ուղղութեան համար դրուած է, որ կրնայ ընդգիծ իրորայքի — խարափի փոխուիլ:

Մարիէս¹ խարափի մասին կ'ըսէ թէ «n'est pas donné dans les lexiques». բայց ինչպէս տեսնաք, զէթ Առնոն Բոն. կը դնէ զայն: Յարգելի հեղինակը նմանահնչին և անոր մօտաւոր նշանակութեամբ բառ մը կ'առաջարկէ՝ խարափ. սակայն իսկոյն կը հրաժարի համեստօրէն իր առաջարկէն՝ նախընտրութիւն տալով Գալեմբարի խարխափ սրբագրութեան:

Մարիէսի յետս կոչումը իրաւացի է, քանի որ ոչ մէկ հեղինակութիւն կամ բնագրական փաստ ունի իր կողմը: Թողունք որ խարափը՝ խարափ փոխելով նոյնքան խնդրական և մեկնութեան կարօտ կը մնայ խօսքը:

Աղոնց² ալ բացարձակօրէն կը մերժէ Մարիէսի ահանկան առաջարկը խարափի մասին. ձայնակցելով սակայն անոր՝ նախընտրի նկատելու Գալեմբարի սրբագրութիւնը:

Սակայն հարկ է ըսեմ որ ոչ Մարիէս և ոչ Աղոնց փաստ մը կը բերեն Գալեմբարի սրբագրութեան ի նպաստ, բաց ի իրենց անհնական տեսակէտէն. յետոյ կասկածելի կը մնայ Գալեմբարի խարափը քանի որ ձեռագրական ոչ մէկ հեղինակութիւն ունի իր կողմը, ինչպէս և կասկածելի ենթագրութիւն՝ խարափը գոյականաբար ընդունելու, մինչ ան միշտ մակբայաբար միայն կը գործածուի, ինչպէս կարելի է տեսնել նաև Հիշ. Բառարանի բոլոր օրինակներէն՝ առ խարափ, ընդ խարափի նաև:

113 են. — ՈՐՄԱՅ. Զմ. տպ. և Աճ. Զ. միշտ Որմզդ, Որմզդ ունին, և Զմ. տպ.ի վրայ միայն մէկ անգամ Որմզդը (100, 16)՝ Որմզդ սրբագրուած է. մինչ Բգրտ. տպ. ի վրայ միշտ ՈՐՄԱՅ է: Հաւանօրէն Բագրատունին Որմզդ տպած է իբրև սովորական և ծանօթ ձև այդ անուան՝ համեմատ միւս հեղինակներուն քով գործածուած ձևին:

1. Revue և էջ 98 (180).

2. Բազմաձեզ 1926 էջ 110.

էջ տող.	էջ. տող.	
108 8 Ջի ոչ յԱստուծոյ կարգեցան	121 23 ... այլ ի մարդկանէ հետքոս	
այլ ի մարդկային հետքոս	դուքնէ	
110 1 Լինէր նմա որդի	123 26 (արդարեւ) Լինէր (նմա որդի)	Լինէր (վերին ի բուռն է նախապէս է գրուած)
111 6-7 Եթէ առականութեան զմեզ	125 13 Եթէ առ տկարութեան լզե	լզմեղեցէ (տողամիտում է լզեմեղեցէ?)
կեցէ	մեղեցէ	

113. 19. — Անցողաբար կը նշանակենք որ Եզեկի պոյսական տպ.երը (Ա... Բ. 1864, Գ. 1873) ինչպէս և փարիզեանը (1860)՝ փոխանակ Զմ. Գէորգ. Բգրտ. Աճ. Զ. ի մօտ բառին՝ հօր կը դնեն, Թէ ուսկից է այս տարբերութիւնը, կամ մը հեղինակութեամբ՝ չեմ գիտեր, սակայն հաւանութեն մէկուն վրիպակն ըլլալու է որ միւսներուն ալ անցած է. (քանի որ յար և նման են երկու տպագրութիւններն ալ)։

121, 23. — Զմ. տպ.ը ունի՝ ի մարդկային հնարողութիւնէ, մինչ Գէորգ-Բգրտ. զայն սըրբազրած են՝ ի մարդկանէ հնարողութիւնէ. կատարուած սրբազրութիւնը կը վաւերացնէ նաև Աճ. Զ.ը. որով, ըստ իս, կասկած պէտք չէ որ մնայ. սակայն Աճ. այդ հեղինակութեանց հակառակ՝ ի մարդկան՝ կը սրբազրէ. այդ զարտուղի ձեւը կարծեմ միակը չէ նախնեաց քով. (տես ի կնոյք բազառարէն. Փաւստոս). որով շատ լաւ կրնայ մնալ այն երկու ձեռագիրներուն համաձայն։

125, 13. — ՋԵՄԵՐԵՄ՝ ուղղելի ՋԵՄԵՐԵՄ. — Նորայր,՝ յատկապէս մէջ բերելով Եզեկի «Եթէ առ տկարութեան լզեմեղեցէ», ինչպէս նաև զանազան օրինակներ յատկապէս Ոսկերեանէն, իբրև անձնական գիտ և կարծիք կը շնայ ցուցնել Թէ զմեղեցմը իսթարուած ձևն է զետեղեմի և Թէ վրիպակը ծագած է Տի և Մի շփոթ ընթերցումէն։

Շեշտեցի՝ իբրեւ անձնական գիտ և կարծիք, որովհետև այսպէս կը խօսի Նորայր. «Ես կարծեմ կարողաւ է եթէ առ տկարութեան լզեմեղեցէ» և կը յաւելու «կ'իմանամ» ևն։

Բաց աստի՝ կ'ըսէ, նոյն էջին մէջ, «Ամենայն Բառագիրք զմեղեցի կը կարդան և կը մեկնեն ինչպէս՝ ի գուր չարժեք, վատնգէ ազատել»։

Դարձեալ էջ 17 «Ընտիր չեմ համարիր... զեմուղ պահել գրութիւնը քանի որ ի լուսանցին կը նշանակէ զեմուղ (կարդալ զետեղ) և Բարիզեան օրինակն յայտնապէս կը գրէ զետեղեց» ևն։

Յետոյ «Նոյնպէս խոսելի է կարծեմ Ոսկ. Ա. Տիմոթ. մեկն. ԺԴ... զեմուղ պահեն գրուածը, մինչդեռ ուրիշ օրինակ և Նոր Նիկի. կը դնեն զետեղ պահեն» ևն. և հոն մէջ բերած օրինակները ամէնքն ալ Նիկի.էն քաղուած են։

Սակայն այս ամէնէն վերջ կը բանամ Նիկի. և կը քննեմ զեմուղ ու զեմուղ՝ արմատ զեմուղ-զեմուղեմի. և Նիկի. իսկոյն կը զրկէ զետեղ ձեւին՝ ուր յայտնապէս կը ծանօթագրէ. «Ձեռող. (Ի բառէս ետղ, ետեղ)... Եւ ա. մ. իբր զետեղեալ, առկայացեալ, հաստատուն, անփոփոխ (որ վրիպակաւ գրի և զեմուղ կամ զեմուղ)»։

Կը հետեի Թէ Նորայրի գիտն և անդրադարձութիւնը չէ՛ այս սրբազրութիւնը, այլ Նիկի.ի հեղինակներուն, որոնց գործին կարծեմ մեզմէ աւելի տեղեակ և հմուտ էր ինքը Նորայր։

Կը համարիմ որ այս անդրադարձութիւնը վրիպած է Բաբբէն՝ Մ. ի աչքէն ալ, քանի որ առ այս սրբազրութիւնը Նորայրի կ'ընծայէ, առանց ո՛ր և է ակնարկ մ'ընելու Նիկի. Բառ.ին։

Ձարմանալի կը մնայ հուսկ և այն Թէ ինչպէս Բագրատունի, Նիկի.էն վերջ ալ շարունակած է դեռ կիրարկել զեմուղեմ, որ. Պոստէի Գամբանականներուն մէջ, ինչպէս Նորայր ալ կը յիշէ։

(Շարունակելի)

Հ. ԵՐԱՆ ՓԵՏԻՍԵԱՆ

1. Պենութիւն ևն էջ 88-89.

2. Նիկի. Բաբբէն. էջ 17.

3. Նիկի. Ամս. 1907 Նիկի. էջ 314.